Հայաստանի կենսաբ. հանդես, 4(72), 2020

ԳԻՏՈՒԹՅԱՆԸ ԱՆՄՆԱՑՈՐԴ ՆՎԻՐՎԱԾ ԿՅԱՆՔ
(պրոֆեսոր Գ.Հ. Փանոսյանի հիշատակին)

Կյանքի 90-րդ տարում իր մահկանացուն կնքեց Երևանի պետական համալսարանի կենսաֆիզիկայի ամբիոնի պատվավոր վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ, հմուտ և սիրված մանկավարժ Գերասիմ (Գարեգին) Հարությունի Փանոսյանը: Լինելով գիտնական իր ողջ էությամբ, խոր գիտելիքներ ունեցող վառ անհատականություն, կիրթ, սկզբունքային և հայրենասեր մտավորականի՝ նա ամբողջ գիտակցական կյանքը նվիրեց իր սիրած գործին՝ գիտամանկավարժական գործունեությանը: Պրոֆեսոր Գ.Հ. Փանոսյանի ներդրումը հայ կենսաբանական գիտական մտքի զարգացման, Հայաստանում կենսաբանության ժամանակակից բնագավառների՝ հատկապես կենսաֆիզիկայի և մոլեկուլային կենսաբանության գծով մասնագետների պատրաստման գործում, դժվար է գերագնահատել: Հարյուրավոր երիտասարդ կենսաբաններ են կրթվել, կենսաբանի իրենց մկրտությունը ստացել՝ ունկնդրելով պրոֆեսոր Գ.Հ.Փանոսյանի բովանդակալից դասախոսությունները, շփվելով այդ հաճելի և բանիմաց գիտնականի հետ, իսկ մի քանի տասնյակը նրանցից իրենց գիտական ուղին անցել են պրոֆեսորի անմիջական աջակցությամբ և ղեկավարությամբ:

Գերասիմ Հարությունի Փանոսյանը ծնվել է Մոսկվայում 1930 թվականին: Հայրը՝ Հարություն Կարապետի Փանոսյանը, Չիֆլիկ գյուղաքաղաքից էր (Արևմտյան Հայաստան), ցեղասպանությունից մազապուրծ եղած, անասելի դժվարություններ հաղթահարած, ով, հասնելով Արևելյան Հայաստան, ստանալով բարձրագույն կրթություն դարձավ հայտնի մանրէաբան, հետագայում Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ: Վերջինս, ամենայն հավանականությամբ, իր ազդեցությունն է ունեցել երիտասարդ Գերասիմ Փանոսյանի մասնագիտական կողմնորոշման մեջ: 1953 թվականին նա, փայլուն գնահատականներով ավարտելով Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետը, մեկնում է Մոսկվա՝ սովորելու պետական համալսարանի ասպիրանտուրայում, խոշոր ֆիզիոլոգ, առաջադեմ և նորարար գիտնական, ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Խաչատուր Սերգեյի Կոշտոյանցի ղեկավարությամբ: 1957 թվականին Գերասիմ Փանոսյանը Մոսկվայում պաշտպանում է թեկնածուական ատենախոսությունը, որը նվիրված էր այդ ժամանակվա հրատապ հարցերից մեկին՝ կմախքային մկանների միոնևրալ սինապսում ացետիլխոլին-խոլինէսթերազ համակարգի դերին: Թեև ատենախոսության թեման ֆիզիոլոգիական էր, լինեժլով կենսաքիմիական ֆիզիոլոգիայի բնագավառի ուսումնասիրություն, այն անմիջականորեն առնչվում էր այդ ժամանակ դեռևս նոր ձևավորվող մոլեկուլային կենսաբանական պատկերացումներին: Երիտասարդ Գ.Հ. Փանոսյանի ամենօրյա անմիջական շփումները Խ.Ս. Կոշտոյանցի հետ, նրա ծանոթացումը երևելի գիտնականներ Վ.Ա. Էնգելգարդտի, Ա.Ն. Բելոզերսկու և մյուսների օրիգինալ ուսումնասիրություններին, Մոսկվայի պետական համալսարանում այդ տարիներին տիրող մոլե-

կուլային կենսաբանության «մթնոլորտը» մեծ դեր խաղացին Գ.Հ. Փանոսյանի հետագա մասնագիտական կողմնորոշման, գիտական հետաքրքրությունների ձևավորման գործում: Վերջինիս նպաստեց նաև նրա՝ 1961-1963 թվականների աշխատանքային գործունեությունը ԽՍՀՄ ԲԳԱ պոլիոմիելիտի և էնցեֆալիտի ինստիտուտում՝ հայտնի վիրուսաբան պրոֆեսոր Վ.Ի. Ագոլի լաբորատորիայում:

1963 թվականին Գ.Հ. Փանոսյանը հրավիրվում է Հայաստան և հիմնադրում Երևանի պետական համալսարանի կենսաֆիզիկայի ամբիոնը, որը ղեկավարում է շուրջ 28 տարի: Այդ տարիներին նա իրեն դրսևորում է նաև որպես գիտամանկավարժական գործունեության հմուտ կազմակերպիչ: Այդ մասին են վկայում 1977 թվականին նրա նշանակումը Երևանի պետական համալսարանի գիտական աշխատանքների գծով պրոռեկտորի պաշտոնում, ինչպես նաև, մեկ տարի անց, նրա հնգամյա գործունեությունը Երևանի պետական անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտի ռեկտորի պաշտոնում: Այդ պատասխանատու պաշտոնում նա էապես բարելավեց ինստիտուտի բարոյահոգեբանական մթնոլորտը, անհաշտ պայքար մղեց եղած բացասական երևույթների դեմ: 1983 թվականին Գ.Հ. Փանոսյանը ստանձնում է Հայաստանի ԳԱ փորձարարական կենսաբանության ինստիտուտի ղեկավարումը, նպաստում ինստիտուտում իրականացվող մոլեկուլային կենսաբանական բնույթի հետազոտությունների զարգացմանը՝ ապագայում նրա՝ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի վերափոխմանը: Օժտված լինելով մեղմ, հավասարակշիռ, միաժամանակ խիստ սկզբունքային բնավորությամբ, կազմակերպչական կարողություններով, նա կարողացավ հաջողությամբ լուծել երկար տարիներ ինստիտուտում առկա շատ հիմնահարցեր: 1986 թվականին Գ.Հ. Փանոսյանը վերադառնում է իր հարազատ համալսարան, իր հիմնադրած ամբիոն, որի պատվավոր վարիչ է նշանակվում 1997 թվականից:

Պրոֆեսոր Գ.Հ. Փանոսյանի ուսումնասիրություններն ուշադրության են արժանացել ոչ միայն Հայաստանում և նախկին ԽՍՀՄ գիտական շրջաններում, այլև արտասահմանյան առաջատար գիտական կենտրոններում: 1966 թվականին նա հրավիրվում է Լոնդոնի Ուռուցքաբանության կենտրոն, որտեղ 10 ամիս հետազոտություններ է իրականացնում պրոֆեսոր Բատլերի գլխավորած լաբորատորիայում, 1972 թվականին աշխատում է ԱՄՆ-ում՝ Կալիֆոռնիայի տեխնոլոգիական ինստիտուտում՝ պրոֆեսոր Ջ.Բոնների լաբորատորիայում, իսկ 1976 թվականին՝ Մեծ Բրիտանիայում, Պորտսմութի պոլիտեխնիկական ինստիտուտում՝ պրոֆեսոր Բրեդբերիի լաբորատորիայում:

Լայն է պրոֆեսոր Գ.Հ. Փանոսյանի հետաքրքրությունների շրջանակը՝ քրոմատինի և նրա բաղադրամասերի, հատկապես ԴՆԹ-ի և հիստոնների, կառուցվածքաֆունկցիոնալ հետազոտություններ, գենային ակտիվության հորմոնային կարգավորում, գենոմի վրա կենսաբանորեն ակտիվ այլ միացությունների ազդեցության մեխանիզմների բացահայտում և այլն: Նշված հիմնահարցերի հետազոտման օբյեկտներ են ծառայել տարբեր կենսահամակարգեր՝ վիրուսներ և ֆագեր, բակտերիաներ, բույսեր, կենդանիներ, նորմալ և ուռուցքային բջիջներ, իսկ ուսումնասիրություններն իրականացվել են ֆիզիոլոգիական, կենսաքիմիական, կենսաֆիզիկական, իմունոլոգիական, մանրէաբանական, մոլեկուլային կենսաբանական մեթոդների կիրառմամբ:

Նշված հետազոտությունների մի մասը ընդհանրացվել են Գ.Հ. Փանոսյանի «Հիստոնների որոշ հատկությունների և ֆունկցիաների հետազոտությունը» թեմայով դոկտորական ատենախոսության մեջ, որը պաշտպանեց 1973 թվականին, ինչպես նաև «Հիստոնների կառուցվածքը և ֆունկցիան» ուշագրավ մենագրության մեջ (1978 թվական), որի կարևորությունը թե՞ մասնագետների, և թե՞ ուսանողության համար անհնար է գերագնահատել: Նա 300-ից ավելի գիտական աշխատությունների հեղինակ է, այդ թվում՝ 2 մենագրության, մեծաթիվ գիտական հոդվածների, որոնք հրատարակվել են ինչպես Հայաստանի և նախկին ԽՍՀՄ գիտական ամսագրերում, այնպես էլ արտասահմանյան հեղինակավոր պարբերականներում: Պրոֆեսոր Գ.Հ. Փանոսյանի անմիջական աջակցությամբ ԵՊՀ կենսաֆիզիկայի ամբիոնում իրականացվել և պաշտպանվել են 3 դոկտորական ատենախոսություններ, նա ղեկավարել է շուրջ մեկ ու կես տասնյակ թեկնածուական ատենախոսություններ, որոնք նվիրված են կենսաֆիզիկայի և մոլեկուլային կենսաբանության բազմաբնույթ հարցերին:

Շնորհաշատ գիտնականը, սիրված, վաստակաշատ մանկավարժն իր բազմամյա աշխատանքի և հայ գիտական մտքին մատուցած ծառայությունների համար բազմիցս

պարգևատրվել է մեդալներով և պատվոգրերով, իսկ 1981 թվականին արժանացել է Հայաստանի գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչման: Նվիրյալ գիտնական և գիտության հմուտ կազմակերպիչ, հայրենասեր քաղաքացի Գերասիմ Հարությունի Փանոսյանի հիշատակը միշտ վառ կմնա նրա աշակերտների և նրան ճանաչողների սրտում:

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Է.Ս.Գևորգյան
ԵՊՀ կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ՝ պրոֆեսոր Պ.Հ.Վարդևանյան